ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2020թ.

Առցանց դիմող
Վահե Խաչիկյանին

Ի պատասխան Ձեր 27.05.2020թ. տեղեկատվական հարցման
Հարգելի պարոն Խաչիկյան

ՀՀ Լոռու մարզում երիտասարդության հետ կապված հարցերի համակարգման նպատակով Լոռու մարզպետին կից երիտասարդական աշխատանքային խումբը ստեղծվել է 2019թ.-ի նոյեմբերի 6-ին: Աշխատանքային խմբի հետ համատեղ քննարկվել և ձևակերպվել են աշխատանքային խմբի նպատակները, իրականացվել են աշխատանքային քննարկումներ, խորհրդակցություններ, հանդիպումներ և ճանաչողական այցելություններ:
Մարզպետին կից երիտասարդական աշխատանքային խումբն առաջարկել և մշակել է իր նպատակներին համահունչ ծրագրային փաթեթներ, որոնց իրականացումը, սակայն, կորոնավիրուսային համաճարակի պատճառով հետաձգվել է:
Արագ արձագանքելով փոփոխվող իրավիճակին՝ աշխատանքային խմբի անդամները 2020թ.-ի մարտից կամավորության սկզբունքով մասնակցել են մարզի տարածքում սոցիալապես անապահով խմբերին սննդօգնության բաշխման աշխատանքներին, ինչպես նաև համավարակի կանխարգելման նպատակով մարզպետարանի կողմից իրականացվող միջոցառումներին:
Համավարակի ավարտից հետո երիտասարդական խմբի աշխատանքները կկրեն առավել համակարգված ու հիմնավոր բնույթ, ինչը հնարավորություն կտա արդյունավետ քաղաքականություն վարել մարզի երիտասարդների կողմից մասնակցային կառավարման ու համատեղ ծրագրեր իրականացնելու առումով:

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

կատ. Հ.Այվազյան
հեռ. /0322/ 2-28-77